

## ԾՐԱԳԻՐ

### **ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՆՄՈՒՇԱՌՄԱՆ ԵՎ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԿՈՆԿՐԵՏ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ**

Սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի, անասնաբուժական և բուսասանիտարական ենթահսկման ապրանքների ներմուծման, արտահանման, մշակման, վերամշակման, արտադրության փուլերում պետական վերահսկողության շրջանակներում նմուշառման և լաբորատոր փորձաքննության կազմակերպման գործընթացի իրականացումը լիարժեք ապահովելու նպատակով կոնկրետ հանձնարարականների իրականացման համար նպատակահարմար է ներգրավել փորձագետ:

Փորձագետը իրականացնում է փորձանմուշների լաբորատորիաներ տեղափոխելու ժամանակացույցի և օպտիմալ երթուղու մշակում, մասնակցում է նմուշառման և լաբորատոր փորձաքննությունների կազմակերպման բաժնի կողմից վարվող էլեկտրոնային տեղեկատվական բազաների վարման աշխատանքներին, ինչպես նաև բաժնի գործառույթներին առնչվող Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի կողմից մշակված ակտերի նախագծերի վերաբերյալ տրամադրում է առաջարկություններ:

Փորձագետը սույն ծրագրով կատարման ենթակա աշխատանքներն իրականացնում է վեց ամիս ժամկետով:

Փորձագետի կողմից կատարված աշխատանքների արդյունքում առաջադրված խնդիրները պետք է ստանան ամբողջական լուծում:

Փորձագետը սույն ծրագրով նախատեսված աշխատանքների վերաբերյալ երեք ամիսը մեկ անգամ՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 5-ը, անմիջական ղեկավարին է ներկայացնում կատարված աշխատանքների վերաբերյալ ամփոփ հաշվետվություն:

Փորձագետի աշխատանքների գնահատման համար հիմք է հանդիսանում վերջինիս կողմից ներկայացված հաշվետվությունները:

Սույն ծրագրի իրականացման համար փորձագետը պետք է ունենա՝

- տնտեսագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն
- հայերեն և ռուսերեն լեզուների իմացություն,
- համակարգչով աշխատելու ունակություն,

«Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին», «Անասնաբուժության մասին», «Սննդամթերքի անվտանգության մասին» «Բուսասանիտարիայի մասին» օրենքների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 9- N 1009-Ն որոշման իմացություն: